ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿՈՆՏՐՈԼ ՍԹԱՐ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA
«CONTROL STAR»
LIMITID LIABILITY
COMPANY

/Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ /ՀԿ խորհրդի 18.11.2022թ-ի Թիվ 42-Ա որոշմամբ ռեեստրում գրանցման ամսաթիվը՝ 18.11.2022թ, հիմնական գրանցման համարը Թիվ /1220728/

ՀՎՀՀ 01046204
ք. Երևան, Էմինեսկու 2փ. 10/2

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԼԻԱ-Կ Գրուպ» ՍՊԸ մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԼԻԱ-Կ Գրուպ» ՍՊԸ այսուհետ «Ընկերություն» ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ընկերությունից՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ընկերությունը լուծարելու կամ ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթուրումը, երբ այն առկա է: Խեղաթուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական , երբ խելամտորոն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև՝

-Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

-Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

-Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

-Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե աուդիտորը եզրահանգում է, որ առկա է էական անորոշություն, ապա պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն, ապա ձևափոխել կարծիքը: Աուդիտորի եզրահանգումները հիմնված են մինչև աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը

-Երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը

-ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

Տնօրեն, աուդիտի ղեկավար Լուսինե Շահոյան

«ԿՈՆՏՐՈԼ ՍԹԱՐ» ՍՊԸ

Հայաստանի Հանրապետություն,

ք. Երևան Էմինեսկու 2փ 10/2տ

2024թ. ապրիլի 22